ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում 2010թ. գործունեության վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ, 2011թ.

Բովանդակություն

1. Նախաբան 3
2. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրական զարգացումները 4
3. Տեղեկատվության հավաքագրումը և ՖԴԿ տվյալների շտեմարանը 5
4. ՓԼ/ԱՖ ոլորտում կատարված վերլուծությունները և դրանց արդյունքները 7
5. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության խախտումները, կիրառված պատասխանատվության միջոցները.....10
6. Միջազգային համագործակցությունը.....11
7. Ուսուցում, խորհրդատվություն և տեխնիկական օժանդակություն 14

1. Նախաբան

Սույն հաշվետվությամբ ներկայացվում են 2010թ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի ոլորտում իրականացված աշխատանքները և դրանց արդյունքները:

Հայաստանի Հանրապետությունում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի ներդրման սկզբից ի վեր իրականացվող աշխատանքները միտված են եղել համակարգի կատարելագործմանը և այն միջազգային պրակտիկայում կիրառելի չափանիշներին համապատասխանեցմանը: Այս հանգամանքով պայմանավորված, ֆինանսական հետախուզության ազգային մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնը (այսուհետ՝ ՖԴԿ), կոորդինացրել կամ իրականացրել է մի շարք աշխատանքներ, որոնք ուղղված են եղել Հայաստանի Հանրապետությունում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի 2010-2013թթ. ազգային ռազմավարությամբ նախանշված նպատակների իրագործմանը: Մասնավորապես, այդ աշխատանքներում մեծ տեղ է հատկացվել ՖԱԹՖ-ի ստանդարտներին լայնորեն համապատասխանող օրենսդրության ներդրմանը, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մեխանիզմների՝ ռիսկերի վրա հիմնված մոտեցմամբ սկզբունքների գործարկմանը, հաշվետվություն տրամադրող բոլոր անձանց (ֆինանսական հաստատություններ, ոչ ֆինանսական հաստատություններ և անձինք) կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության պահանջների հավասար կիրառման ապահովմանը, ներպետական և միջազգային համագործակցության ամրապնդմանն ու ընդլայնմանը և այլն:

2010թ-ի ընթացքում, ի թիվս այլ աշխատանքների, կատարվել է Հայաստանի Հանրապետությունում ՓԼ/ԱՖ ռիսկի ռազմավարական վերլուծություն, որի արդյունքներն ամրագրվել են «ՀՀ-ում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկի ռազմավարական վերլուծության ամփոփում» վերտառությամբ փաստաթղթում[1]: Վերլուծության արդյունքները վկայում են, որ Հայաստանի Հանրապետությունում ՓԼ/ԱՖ հնարավոր ռիսկերը հիմնականում կենտրոնացած են ֆինանսական համակարգում՝ հաշվի առնելով դրանում շրջանառող միջոցների ծավալները, ֆինանսական գործարքների լայն տեսականին, անդրազգային գործառնությունների կատարման հնարավորությունները և այլն. նշենք, որ նման իրավիճակը բնութագրական է զարգացած ֆինանսական համակարգ ունեցող երկրների մեծ մասի համար: Ոչ ֆինանսական ոլորտում պատկերն այլ է. այստեղ ռիսկերն էապես ցածր են՝ պայմանավորված այս ոլորտում միջնորդավորված ծառայությունների զարգացածության ցածր մակարդակով, դրանց պարզ տեսականիով, շրջանառության փոքրածավալությամբ և միջազգային կապերի սահմանափակ շրջանակով: Միաժամանակ, վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ ի տարբերություն ոչ ֆինանսական ոլորտի՝ ֆինանսական ոլորտում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի կանխարգելիչ միջոցառումները և կարողությունները Հայաստանի Հանրապետությունում առավել արդյունավետ են գործում, քանի որ օրենսդրությամբ ամրագրված վերահսկողական միջոցառումները և ֆինանսական ոլորտի ներքին կանոնակարգվածությունը գտնվում են ավելի բարձր մակարդակի վրա: Ինչ վերաբերում է ահաբեկչության ֆինանսավորմանը, ինչպես ռազմավարական վերլուծության արդյունքները,

[1] ՀՀ-ում ՓԼ/ԱՖ ռիսկերի մասին առավել մարամասն տես ինտերնետային հետևյալ հասցեով՝ http://www.cba.am/am/SitePages/fmcregulation.aspx

այնպես էլ տարբեր միջազգային կառույցների կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքները վկայում են այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունում ահաբեկչության և, հետևաբար, ահաբեկչության ֆինանսավորման ռիսկը խիստ ցածր է. սա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ երկրում բացակայում են էթնիկ, կրոնական կամ այլ խտրականության հողի վրա ձևավորված շարժումները կամ ծայրահեղական խմբավորումները:

2010թ-ին ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում իրականացված աշխատանքներում մեծ տեղ է հատկացվել միջազգային կազմակերպությունների և կառույցների կողմից իրականացվող ծրագրերին ու աշխատանքներին ինչպես ՖԴԿ-ի, այնպես էլ ոլորտին առնչվող այլ մարմինների ներգրավվածության մեծացմանը: Մասնավորապես, միջազգային կառույցների կողմից մի շարք երկրների (Կիպրոս, Սան Մարինո, Ղազախստան) ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի գնահատումներին Հայաստանի Հանրապետությունից ներգրավվել են փորձագետներ, իսկ Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբում և Վարշավայի կոնվենցիայով ստեղծված համաժողովում ՖԴԿ-ի ներկայացուցիչները ընտրվել են բյուրոյի կազմում: ՖԴԿ-ի ներկայացուցիչները ներգրավված են նաև ֆինանսական հետախուզության մարմինների Էգմոնտ խմբում և Փողերի լվացման ու ահաբեկչության դեմ պայքարի եվրասիական խմբում գործող համապատասխան աշխատանքային խմբերի ղեկավար կազմում: Այս հանգամանքը ևս վկայում է այն մասին, որ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի կատարելագործման ուղղությամբ 2010-2013թթ ռազմավարական ծրագրով ամրագրված միջազգային համագործակցության նախաձեռնությունները հետևողականորեն իրագործվում են:

2. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրական զարգացումները

Հայաստանի Հանրապետությունում 2008թ-ին ընդունված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանվել են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջազգային չափանիշներին համապատասխան պահանջներ: Այդուհանդերձ, Օրենքի երկամյա գործողության ընթացքում ձևավորված պրակտիկ փորձով, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների գնահատումներով վեր են հանվել որոշակի թերություններ ու բացեր: Ուստի,ՓԼ/ԱՖ դեմ պայքարի անհրաժեշտ մեխանիզմների կատարելագործման, ինչպես նաև միջազգային չափանիշներին լայնորեն համապատասխանող օրենսդրություն ունենալու նպատակով ՖԴԿ-ի կողմից, այլ իրավասու մարմինների մասնագետների ներգրավմամբ մշակվել է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենսդրական փաթեթ, որով առաջարկվող հիմնական փոփոխությունները հետևյալն են.

- Հստակեցնել ՖԴԿ-ի և վերահսկողություն իրականացնող մարմինների իրավասությունները հաշվետվություն տրամադրող անձանց նկատմամբ վերահսկողության իրականացման, ինչպես նաև պատասխանատվության միջոցների կիրառման հետ կապված հարցերում.
- ՀՀ կենտրոնական բանկին վերապահել Հաշվետու անձ հանդիսացող ոչ ֆինանսական հաստատությունների կամ անձանց նկատմամբ Օրենքով սահմանված պահանջների կիրառությանն ուղղված նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավասությունը.

- Բարեփոխել ու հստակեցնել հաճախորդի պատշաճ ուսումնասիրության, գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, կատարված վերլուծությունները փաստաթղթավորելու ու պահպանելու հարցերը.
- Միջազգային պահանջներին համապատասխանեցնել ահաբեկչության հետ կապված ֆինանսական միջոցների կամ այլ գույքի սառեցման, բռնագրավման մեխանիզմները.
- Սահմանել պարտադիր տեղեկացման ենթակա կանխիկ գործարքների վերաբերյալ հաշվետվությունների տրամադրման նոր սահմանաչափ.
- Հստակեցնել փողերի լվացմանը նախորդող հանցակազմերի շրջանակը և այլն:

Օրենսդրական փաթեթը բոլոր շահագրգիռ գերատեսչությունների հետ համաձայնեցվելուց հետո ուղարկվել է ՀՀ կառավարություն:


Բացի այդ, 2010թ-ի ընթացքում ԿԲ խորհրդի կողմից ընդունվել են մի շարք մեթոդական ուղեցույցեր, տիպաբանություններ, լրացումներ և փոփոխություններ են կատարվել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերում:

3. Տեղեկատվության հավաքագրումը և ՖԴԿ տվյալների շտեմարանը

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գործող օրենսդրության համաձայն՝ հաշվետվություն տրամադրող անձինք պարտավոր են ՖԴԿ ներկայացնել ինչպես պարտադիր տեղեկացման ենթակա, այնպես էլ կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվություններ: Միևնույն ժամանակ, մի շարք հաշվետու անձինք, ինչպիսիք են օրինակ փաստաբանները, իրավաբանական ծառայություններ մատուցող անձինք, անհատ ձեռնարկատեր հաշվապահները և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատեր աուդիտորները և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք, ազատված են պարտադիր տեղեկացման ենթակա գործարքներ ներկայացնելու պարտականությունից և պարտավոր են ներկայացնել հաշվետվություններ միայն կասկածելի գործարքների վերաբերյալ:

2010թ-ին հաշվետվություն տրամադրող անձանց կողմից ՖԴԿ ներկայացվել է շուրջ 136.000 պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվություն, ինչի արդյունքում հաշվետու ժամանակաշրջանի ավարտին ՖԴԿ տվյալների շտեմարանում առկա հաշվետվությունների թիվը կազմել է շուրջ 466.000: 2006-2010 թթ. ընթացքում ստացված պարտադիր տեղեկացման ենթակա հաշվետվությունների թվաքանակի դինամիկան, ինչպես նաև 2010թ-ին ըստ հաշվետու անձանց տրամադրված պարտադիր տեղեկացման ենթակա հաշվետվությունների վիճակագրությունը ստորև ներկայացված է գրաֆիկական և աղյուսակի տեսքով.

Պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվությունների թվաքանակի դինամիկան (2006-2010թթ.)




Հաշվետվություն տրամադրող անձինք	31.12.2010թ. դրությամբ հաշվառված	Պարտադիր տեղեկացման հաշվետվ. քանակը
Բանկեր	21	133030
Վարկային կազմակերպություններ	31	190
Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառք իրականացնող անձինք	1	-
Արտարժույթի առուվաճառքի գործունեություն իրականացնող անձինք	225	-
Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող լիցենզավորված անձինք	10	-
Ներդրումային ընկերություններ («Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձինք)	8	131
«Արժեթղթերի շուկայի մասի» ՀՀ օրենքի համաձայն՝ կարգավորվող շուկայի արժեթղթերի կենտրոնացված պահառուն	1	222
Ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) ընկերություններ	11	1268
Ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) միջնորդային գործունեություն իրականացնող անձինք	5	50
Ապահովագրական գործակալներ	343	-
Գրավատներ	88	-
Նոտարներ	79	1001
Շահումով խաղ և խաղատներ,	92	-
Վիճակախաղ կազմակերպող անձինք	4	-
Անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող լիազորված մարմին	49	547

Իրավաբանական անձանց գրանցող պետական մարմին (պետական ռեգիստրը)	49	141
ԸՆԴԱՄԵՆԸ		**136.580**

4. ՓԼ/ԱՖ ոլորտում կատարված վերլուծությունները և դրանց արդյունքները

ՖԴԿ-ն՝ հանդիսանալով ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում տեղեկատվություն հավաքագրող, վերլուծություն իրականացնող և տեղաբաշխող ազգային մարմին, իր իրավասությունների իրականացման նպատակով, հաշվետվություններ է ստանում ինչպես հաշվետու անձանցից,այնպես էլ համապատասխան տեղեկություններ է հավաքագրում վերահսկող և այլ մարմիններից: Ստացված տեղեկությունները ենթարկվում են վերլուծության, և ըստ անհրաժեշտության ու պատկանելիության՝ Օրենքով սահմանված կարգով, տրամադրվում են իրավապահ կամ վերահսկող մարմիններին:

Ընդ որում, ՖԴԿ-ի կողմից իրականացվող վերլուծության ընթացքում անհրաժեշտություն է առաջանում իրականացնել լրացուցիչ հարցումներ և ստանալ տեղեկություններ ինչպես հաշվետու անձանցից, այնպես էլ ներպետական իրավապահ և վերահսկող մարմիններից, անհրաժեշտության դեպքում նաև օտարերկրյա գործընկերներից: 2010թ-ի ընթացքում իրականացված հարցումների վերաբերյալ ընդհանրական վիճակագրությունը ըստ հարցվող սուբյեկտների՝ ներկայացվում է ստորև.



ՖԴԿ կողմից հաշվետու անձանցից պահանջվող և ներպետական մարմիններից խնդրարկվող տեղեկատվությունը հիմնականում վերաբերում է.

- Ֆինանսական հաստատությունների կողմից իրենց հաճախորդների պատշաճ ուսումնասիրությանը, նրանց հաշիվներով կամ անհաշիվ իրականացված գործարքներին.
- Իրավաբանական անձանց ֆինանսական հաշվետվություններին և դրանցում արտացոլված տեղեկություններին.
- Իրավաբանական անձանց հիմնադիրների, ղեկավարների և իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններին.

- Ֆիզիկական անձանց՝ ՀՀ սահմանով մուտք-ելքի, նրանց կողմից նախկինում կատարված քրեական բնույթի արարքների վերաբերյալ տեղեկություններին և այլն:

Իրականացված վերլուծությունների արդյունքում ՓԼ վարկածով իրավապահ մարմիններին տրամադրված տեղեկությունների, դրանց հիման վրա հարուցված ու դատական քննության ներկայացված գործերի, ինչպես նաև կասեցված և/կամ բռնագրավված միջոցների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը 2006-2010թթ. համար ներկայացվում է աղյուսակի տեսքով.

	2006թ.	**2007 թ.**	**2008 թ.**	**2009 թ.**	**2010 թ.**	**Ընդամենը**
ՖԴԿ կողմից հաղորդումներ իրավապահ մարմիններին	**2**	**11**	**11**	**9**	**23**	**56**
ՖԴԿ հաղորդման հիման վրա հարուցված քրեական գործեր	**2**	**2**	**2**	**1**	**5**	**12**
Իրավապահ մարմինների կողմից ՖԴԿ-ից խնդրարկված տեղեկատվություն	**-**	**13**	**19**	**39**	**53**	**124**
Իրավապահ մարմինների նախաձեռնությամբ հարուցված քրեական գործեր	**2**	**2**	**5**	**9**	**8**	**26**
Ընդամենը հարուցված քրեական գործեր	**4**	**4**	**7**	**10**	**13**	**38**
Կայացված դատավճիռներ	**1**	**0**	**0**	**7**	**3**	**10**
ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ կասեցված միջոցներ[2]			**802.000 ԱՄՆ դոլար**	**1.100.000 ԱՄՆ դոլար**	**345.000 ՀՀ դրամ, 290.000 ԱՄՆ դոլար**	
Դատարանի որոշմամբ բյուջե բռնագրավման ենթակա գումարներ (ՀՀ դրամ)[3]	**388.000**	**0**	**0**	**53.824.860**	**514.026.500**	

2010թ.-ին ՖԴԿ կողմից իրավապահ մարմիններին տրամադրված տեղեկությունների մասով փողերի լվացման վարկածների հիմքում ընկած նախորդող հանցակազմերը հիմնականում հետևյալներն են.

- Կեղծ բանկային քարտերի օգտագործմամբ ֆինանսական զեղծարարություններ.

[2] 2010թ. կասեցված միջոցներն ամբողջությամբ դրվել են կալանքի տակ:

[3] Բացի աղյուսակում նշված՝ հօգուտ պետական բյուջե բռնագրավման ենթակա միջոցներից, 2010թ-ին փողերի լվացման հիմքով կայացված դատավճռի համաձայն հօգուտ երրորդ անձի բավարարվել է ևս 502.240.268 ՀՀ դրամի բռնագրավման պահանջ:

- Մատակարարման ծավալների խեղաթյուրմամբ կեղծ հաշիվ-ապրանքագրերի օգտագործման դեպքեր.
- Կեղծ սնանկության գործեր.
- Հարկային պարտավորությունների կատարումից միտումնավոր խուսափելու դեպքեր.
- Թմրամիջոցների ապօրինի շրջանառությունից ստացված միջոցների օրինականացման դեպքեր և այլն:

Հարկ է նշել, որ ՖԴԿ-ի և ներպետական մարմինների միջև համագործակցության արդյունավետության ու օպերատիվության բարձրացման անհրաժեշտությունից ելնելով՝ մշակվել և ներկայումս իրականացվում են միասնական տեղեկատվական միջավայր ստեղծելու ուղղությամբ աշխատանքները, որոնք նախատեսված են Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության 2009-2010թթ. միջոցառումների ծրագրով: Միասնական տեղեկատվական միջավայրը շահագրգիռ մարմիններին հնարավորություն կտա անվտանգ կապուղիների միջոցով արագ փոխանակել տեղեկատվություն, ինչպես նաև միմյանց հասանելի դարձնել յուրաքանչյուր գերատեսչության տեղեկատվական բազաներում առկա անհրաժեշտ տեղեկությունները:

ՖԴԿ-ն օտարերկրյա ՖՀՄ-ների հետ տեղեկատվություն է փոխանակել Էգմոնտ խմբի առանձնացված համակարգով, ինչպես նաև կնքված երկկողմ համաձայնագրերի շրջանակներում: 2007-2010թթ. ընթացքում օտարերկրյա ՖՀՄ-ների հետ փոխանակված տեղեկատվության վերաբերյալ վիճակագրական տվյալները հետևյալն են.

	2007թ.	**2008թ.**	**2009թ.**	**2010թ.**	***Ընդամենը***
ՖԴԿ-ին ուղղված հարցումներ օտարերկրյա ՖՀՄ-երից	**18**	**17**	**25**	**25**	**85**
ՖԴԿ-ի կողմից կատարված հարցումներ օտարերկրյա ՖՀՄ-երին	**17**	**20**	**16**	**28**	**81**

Օտարերկրյա ՖՀՄ-ների կողմից ՖԴԿ-ին ուղղված հարցումները, ինչպես նաև ՖԴԿ կողմից կատարված հարցումները հիմնականում վերաբերում են.

- Ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից ՀՀ ֆինանսական համակարգի միջոցով իրականացված գործառնություններին.
- Կազմակերպությունների հիմնադիրների, ղեկավարների և իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններին.
- Հարցման սուբյեկտների՝ ՀՀ-ում անշարժ գույք կամ այլ ակտիվներ ունենալու հանգամանքին,
- Հարցման սուբյեկտների վերաբերյալ քրեական բնույթի տեղեկատվության առկայությանը և այլն:

Թեպետ փողերի լվացմանն առնչվող հանցագործությունների բացահայտման, մեղադրանքների առաջադրման և դատական որոշումների ընդունման հետ կապված վիճակագրությունն ունի բարելավման միտում, այն դեռևս չի կարող բավարար համարվել, ինչը

հատկապես տեսանելի է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի զարգացած համակարգ ունեցող երկրների վիճակագրության հետ համեմատության դեպքում: Այս առումով, անհրաժեշտ է շարունակել աշխատանքները Հայաստանի Հանրապետության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի 2010-2013թթ. ազգային ռազմավարությամբ նախանշված նպատակների իրագործման, մասնավորապես՝ փողերի լվացման հետ կապված հանցատեսակների քրեական հետապնդման, դատավարական պրակտիկայում կիրառվող միջազգային չափանիշների ներդրման, ՓԼ գործերի դատաքննության և դատավճիռների կայացման բնագավառներում:

5. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության խախտումները, կիրառված պատասխանատվության միջոցները

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության համաչափ կիրառումը շարունակում է մնալ ուշադրության կենտրոնում: Համաձայն գործող օրենսդրության պահանջների, ՖԴԿ-ն եռամսյակային պարբերականությամբ վերահսկող մարմիններից ստանում է հաշվետու անձանց նկատմամբ կիրառված պատասխանատվության միջոցների վերաբերյալ վիճակագրական տվյալներ: Այս առումով հարկ է արձանագրել, որ 2010թ. ոչ ֆինանսական հաստատությունների նկատմամբ պատասխանատվության որևէ միջոց չի կիրառվել: Ինչ վերաբերում է ֆինանսական հաստատություններին, ՖԴԿ-ի և ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության (այսուհետ՝ ՖՎՎ) միջև համագործակցության շրջանակներում 2010թ. ֆինանսական հաստատությունների կողմից հաշվետվությունների ուշացմամբ ներկայացման և/կամ հաշվետվություններում անարժանահավատ տվյալների արտացոլման դեպքերով ՖԴԿ-ի կողմից կազմվել և ՖՎՎ-ին փոխանցվել է թվով 6 ամփոփագիր: Նշված ամփոփագրերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ֆինանսական կազմակերպություններում ՖՎՎ-ի կողմից իրականացվող տեղերում և հեռակա վերահսկողության ընթացքում հայտնաբերած խախտումների հիման վրա կիրառվել են հետևյալ պատասխանատվության միջոցները.

- 1 բանկի ուղարկվել է տեղեկացում՝ խախտումները վերացնելու և հետագայում նման խախտումները բացառելու ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարականով.
- 15 ֆինանսական հաստատության (7 բանկ, 1 ապահովագրական ընկերություն, 2 վարկային կազմակերպություն, 5 փոխանակման կետ) նկատմամբ որպես պատժամիջոց կիրառվել է թվով 39 նախազգուշացում՝ նման խախտումները բացառելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարականով.
- 7 ֆինանսական հաստատության (5 բանկ, 1 վարկային կազմակերպություն, 1 փոխանակման կետ) նկատմամբ կիրառվել է ընդհանուր 3.100.000 ՀՀ դրամի չափով դրամական տուգանք:


Բացի այդ, ՖԴԿ աշխատակիցները մասնակցել են բանկերում ՖՎՎ-ի կողմից իրականացված բոլոր ուղղություններով ստուգումներին՝ օժանդակելով վերստուգող խմբի կողմից նշված բանկերի ՓԼ/ԱՖ կանխարգելման ներքին համակարգի դիտանցման և վերստուգման ակտերի կազմման աշխատանքներին:

6. Միջազգային համագործակցությունը

Գոյություն ունեն մի շարք միջազգային կառույցներ, որոնք ներգրավված են ՓԼ/ԱՖ ոլորտում միջազգային ստանդարտների մշակման և երկրների կողմից դրանց ներդրման գործում: Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս Ֆինանսական դիտարկումների կենտրոնի, ներգրավված է նման միջազգային կառույցների աշխատանքներում:

Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի անդամ, իսկ Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի եվրասիական խմբում ունի դիտորդի կարգավիճակ: Սրանք ՖԱԹՖ[4]-ի տիպի տարածաշրջանային կառույցներ են, որոնք նպատակ ունեն անդամ երկրներում ապահովել ՖԱԹՖ-ի 40+9 հանձնարարականների ներդրումը: ՖԴԿ-ն 2007թ-ից հանդիսանում է նաև ֆինանսական հետախուզության մարմինների Էգմոնտ խմբի անդամ, ինչը հնարավորություն է տալիս համագործակցել աշխարհի շուրջ 120 երկրների ֆինանսական հետախուզության մարմինների հետ, այդ թվում անվտանգ համակարգով փոխանակել տեղեկատվություն, ինչպես նաև մասնակցել խմբի կառավարմանը, լիագումար և աշխատանքային խմբերի նիստերին: Վերոնշյալ, ինչպես նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտին առնչվող այլ մարմինների հետ համագործակցությունը և աշխատանքների կոորդինացումը գործող օրենսդրությամբ դրված է ՖԴԿ-ի վրա:

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջազգային համագործակցության շրջանակներում հիմնական գործընկերները հետևյալն են.



2010թ-ի ընթացքում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչները մասնակցել են վերոնշյալ միջազգային կառույցների հերթական լիագումար և աշխատանքային խմբերի նիստերին, որտեղ ինչպես ներկայացրել են ՀՀ շահերը, այնպես էլ ակտիվորեն մասնակցել են այդ կառույցների կողմից իրականացվող ծրագրերին ու նախաձեռնություններին:

[4] ՖԱԹՖ-ը միջազգային միջկառավարական մարմին է, որը մշակում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի քաղաքականությունը:

Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը մասնակցել է Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի 32-34-րդ նիստերին, այդ թվում նաև՝ հանձնախմբի բյուրոյի նիստերին: Նշված նիստերի ընթացքում քննարկվել ու հաստատվել են մի շարք կարևոր հարցեր, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները.

- Քննարկվել է Սլովենիայի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 4-րդ փուլի գնահատման հաշվետվությունը, որտեղ ՀՀ-ն հանդես է եկել որպես հատուկ վերանայող խմբի (ad hoc) անդամ, ինչի շրջանակներում իր մանրամասն առաջարկություններն ու մեկնաբանություններն է ներկայացրել հաշվետվության նախագծի վերաբերյալ: Կայացած քննարկումների արդյունքում ՀՀ պատվիրակության առաջարկությունների մեծամասնությունն ընդունվել է, և հաշվետվության մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ.
- Քննարկվել և հաստատվել է ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի Առաջընթացի հաշվետվությունը, որով արձանագրվել է նախորդ մեկ տարվա ընթացքում տեղ գտած առաջընթացը և որոշվել է, որ հաջորդ հաշվետվությունը ներկայացվելու է երկու տարի անց.
- Քննարկվել է Անդորրայի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգի վերաբերյալ առաջընթացի երկրորդ հաշվետվությունը, որի հետ կապված ՀՀ պատվիրակությունը հանդես է եկել որպես զեկուցող երկիր (rapporteur country), ինչի կապակցությամբ կատարել է համապատասխան վերլուծություն և ներկայացրել հաշվետվությունը հաստատելու վերաբերյալ իր դիրքորոշումը:

Բացի այդ, 2010 թվականի ընթացքում ՖԴԿ ներկայացուցիչը և ՀՀ գլխավոր դատախազության ներկայացուցիչը որպես Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի գնահատող խմբի անդամ մասնակցել են, համապատասխանաբար, Սան Մարինոյի և Կիպրոսի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 4–րդ փուլի գնահատման աշխատանքներին:

Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը մասնակցել է նաև Եվրասիական խմբի լիագումար նիստերին, հանդես է եկել Եվրասիական խմբի անդամ երկրներին տեխնիկական աջակցություն ցուցաբերելու նախաձեռնությամբ, ներկայացրել նախորդ տարիների ընթացքում ՖԴԿ-ի և Եվրասիական խմբի համատեղ աշխատանքի արդյունքները, ինչպես նաև հետագա համատեղ միջոցառումների տեսլականը: ՖԴԿ ներկայացուցիչն ընտրվել է Եվրասիական խմբի Միջազգային ֆինանսական հարաբերություններում ՓԼ/ԱՖ ռիսկերի գնահատման և կանխարգելման աշխատանքային խմբի համանախագահ:

ՖԱԹՖ-ի հետ համագործակցության շրջանակներում ՖԴԿ ներկայացուցիչները մասնակցել են ՖԱԹՖ-ի և ՄԵՆԱՖԱԹՖ-ի համատեղ լիագումար նիստին, ինչպես նաև ՖԱԹՖ-ի և Էգմոնտ խմբի փորձագետների համատեղ նիստին. վերջինիս ընթացքում ՖԴԿ ներկայացուցիչը հանդես է եկել ֆինանսական հետախուզության մարմինների միջև տեղեկատվության փոխանակման և միջազգային համագործակցության զարգացման վերաբերյալ զեկույցով: Նիստի արդյունքներով արձանագրվել է ներկայացված նյութի կարևորությունը Էգմոնտ խմբի անդամ բոլոր ՖՀՄ-ների համար:

Ֆինանսական հետախուզության մարմինների միջազգային կառույցի՝ Էգմոնտ խմբի գործունեության շրջանակներում ՖԴԿ ներկայացուցիչները շարունակել են ակտիվ մասնակցությունը խմբի լիագումար և աշխատանքային խմբերի նիստերին: Մասնավորապես, հանդիսանալով Իրանի և Տաջիկստանի ՖՀՄ-ների Էգմոնտ խմբին հնարավոր անդամակցության համահովանավոր երկիր՝ ՖԴԿ-ն ներկայացրել է այդ երկրների հետ կատարված աշխատանքի արդյունքները: Բացի այդ, ՖԴԿ պատվիրակությունը պատրաստակամություն է հայտնել հովանավորել (Ռուսաստանի հետ միասին) Թուրքմենստանի ՖՀՄ-ի կողմից Էգմոնտ խմբին հնարավոր անդամակցության հարցում, ինչը ընդունվել է: ՖԴԿ-ն օժանդակել է իր կողմից հովանավորվող ՖՀՄ-ներին Էգմոնտ խմբի անդամակցության նպատակով օրենսդրական ակտերի մշակման հարցում:

2010թ.-ին ՖԴԿ ներկայացուցիչն ընտրվել է Էգմոնտ խմբի Գործառնական հարցերով աշխատանքային խմբի փոխնախագահ, որտեղ ի թիվս իրականացվող այլ աշխատանքների, ՖԴԿ նախաձեռնությամբ, քննարկվել են ֆինանսական հետախուզության մարմինների միջև տեղեկատվության փոխանակման արդյունավետության բարձրացման ուղղված առաջարկություններ:

Դեռևս 2008թ-ին Էգմոնտ խմբի քարտուղարության և կոմիտեի կողմից որոշում է կայացվել Էգմոնտ խմբի հերթական՝ 19-րդ լիագումար նիստն անցկացնել Հայաստանի Հանրապետությունում, ինչի հետ կապված կատարվում են նախապատրաստական աշխատանքներ, այդ թվում՝ Էգմոնտ խմբի վերջին՝ 18-րդ լիագումար նիստի ընթացքում ներկայացվել է Հայաստանի մասին պատմող տեսանյութը:

2010թ. ապրիլին գումարվել է Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին Եվրախորհրդի Վարշավայի կոնվենցիայի շրջանակներում հիմնադրված Կոնվենցիայի Կողմերի Համաժողովի 2-րդ նիստը, որին մասնակցել է ՖԴԿ ներկայացուցիչը և ընտրվել համաժողովի բյուրոյի անդամ:

Տարվա ընթացքում ՖԴԿ-ն փոխըմբռնման համաձայնագրեր է ստորագրել մի շարք ֆինանսական հետախուզության մարմինների հետ: 2010թ.-ի արդյունքներով ՖԴԿ-ն համաձայնագրեր ունի թվով 14 երկրների ՖՀՄ-ների հետ[5]:

Նախնական պայմանավորվածություններ են ձեռք բերվել Չինաստանի և Սաուդյան Արաբիայի ֆինանսական հետախուզության մարմինների հետ փոխըմբռնման համաձայնագրեր կնքելու վերաբերյալ:

Հարկ է նշել, որ գործող օրենսդրության համաձայն՝ ՖԴԿ-ն իրավասու է արտասահմանյան ֆինանսական հետախուզության մարմինների հետ տեղեկատվություն

[5] Այդ երկրներն են՝ Ավստրալիա, Արաբական Միացյալ Էմիրություններ, Բելառուս, Բերմուդա, Թայլանդի Թագավորություն, Իրան, Լեհաստան, Կանադա, Հարավ-Աֆրիկյան Հանրապետություն, Ռումինիա, Ռուսաստանի Դաշնություն, Սան Մարինո, Վրաստան, Ուկրաինա

փոխանակել ինչպես երկկողմանի կնքված փոխըմբռնման համաձայնագրերի հիման վրա, այնպես էլ դրանց բացակայության դեպքում՝ Էգմոնտ խմբի շրջանակներում գործող կանոններին համապատասխան:

7. Ուսուցում, խորհրդատվություն և տեխնիկական օժանդակություն

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով հաշվետու տարվա ընթացքում կազմակերպվել և անց են կացվել սեմինարներ ու դասընթացներ ինչպես օտարերկրյա գործընկերների, այնպես էլ հաշվետվություն տրամադրող անձանց համար:

Միջազգային ուսուցման ծրագրեր

2010թ-ի մայիսին ՖԴԿ-ի հրավերով Հայաստանի Հանրապետություն է այցելել Իրանի Իսլամական Հանրապետության պատվիրակությունը՝ այդ երկրի ՖՀՄ-ի ղեկավարի գլխավորությամբ:

2010թ-ի նոյեմբերին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրավերով Հայաստան է այցելել Տաջիկստանի Ազգային բանկի Ֆինանսական դիտարկումների դեպարտամենտի պատվիրակությունը բանկի նախագահի գլխավորությամբ, որի ընթացքում ի թիվս այլ հարցերի, երկու երկրների կենտրոնական բանկի նախագահները քննարկել են ֆինանսական հետախուզության մարմինների համագործակցության ու փոխօգնության հեռանկարները, ՖԴԿ-ի կողմից Տաջիկստանի ՖՀՄ-ին տրամադրվող տեխնիկական օժանդակությանն առնչվող հարցեր: Օտարերկրյա գործընկերների համար ՖԴԿ-ի կողմից կազմակերպվել են նաև սեմինար-քննարկումներ, որի ընթացքում ներկայացվել են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտի իրավական, ինստիտուցիոնալ, կազմակերպչական և տեխնիկական ապահովվածության վերաբերյալ նյութեր:

Ներպետական ուսուցման ծրագրեր

ՖԴԿ-ի կողմից ապրիլ-մայիս ամիսներին Ծաղկաձորում կազմակերպվել են սեմինար-քննարկումներ բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական և ներդրումային ընկերությունների ներքին դիտարկումների մարմինների աշխատակիցների համար: Գնահատելով նմանատիպ ուսուցողական աշխատանքների կարևորությունը՝ ընդլայնվել է սեմինարների աշխարհագրությունը և, ՖԴԿ-ին ԱՄՆ Գանձապետարանի կողմից տրամադրվող տեխնիկական օժանդակության շրջանակներում, հունիս-հուլիս ամիսներին Երևանում սեմինարներ են կազմակերպվել ոչ ֆինանսական հաստատությունների, մասնավորապես՝ հաշվապահական և աուդիտորական ընկերությունների, փաստաբանների, ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության և ՀՀ կենտրոնական դեպոզիտարիայի ներկայացուցիչների, ՀՀ ԿԱ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակիցների և ռիելթորական գործունեություն իրականացնող կազմակերպությունների, ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակիցների, խաղատների և շահումով խաղ կազմակերպող անձանց, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի մաքսային և հարկային մարմինների աշխատակիցների համար:

Վերը նշված սեմինարների ընթացքում պարզաբանումներ են ներկայացվել և քննարկումներ են կայացել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում սահմանված պահանջների կատարման գործնական մեխանիզմների և զարգացման հնարավորությունների վերաբերյալ:

ՓԼ/ԱՖ ռիսկերին համարժեք կանխարգելման մեխանիզմների կիրառման համար պատասխանատու ֆինանսական հաստատությունների աշխատակիցների (ներքին դիտարկումների գործառույթն իրականացնող աշխատակիցներ, ներքին աուդիտի անդամներ, հաճախորդների սպասարկում իրականացնող աշխատակիցներ, ՓԼ/ԱՖ ներքին ռիսկերի հետ առնչվող այլ աշխատակիցներ) գիտելիքներն ու գործնական կարողությունները բարձրացնելու նպատակով 2010թ. հոկտեմբերին ՖԲՔ Հիմնադրամի Ֆինանսաբանկային ուսումնական կենտրոնում կազմակերպվել են դասընթացներ: Վերջիններիս ընթացքում ներկայացվել է Հայաստանի Հանրապետության իրավական կարգավորման համակարգը, ուսումնասիրվել են գործնական իրավիճակներ և կայացել են ինտերակտիվ քննարկումներ:

Բացի այդ, տարվա ընթացքում ՖԴԿ թվով 7 աշխատակիցները մասնակցել են միջազգային տարբեր սեմինարների և ուսումնական ծրագրերի:

Տեխնիկական օժանդակություն

ՖԴԿ-ն համակարգել է Հայաստանի Հանրապետության համապատասխան գերատեսչություններում և հաստատություններում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի կարիքները գնահատելու նպատակով 2010թ. ընթացքում տեղի ունեցած ԱՄՀ փորձագետների երեք այցեր:

Ապրիլին կատարված այցի ընթացքում ուսումնասիրվել է ՀՀ-ում գործող ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ռազմավարությունը և երկրի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 3-րդ փուլի գնահատման հաշվետվության հաստատումից հետո արձանագրված առաջընթացը: Այցի շրջանակներում ԱՄՀ-ի կողմից ուսումնական սեմինար է կազմակերպվել ոչ ֆինանսական հաստատություններին ու անձանց վերահսկող մարմինների աշխատակիցների համար: Բացի այդ, ԱՄՀ փորձագետները հանդիպել են «Հայաստանի Հանրապետությունում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի լվացման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով միջգերատեսչական հանձնաժողով կից գործող աշխատանքային խմբի անդամների հետ, որի ընթացքում քննարկել են ինչպես ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ռազմավարական հարցեր, այնպես էլ առանձին գերատեսչություններում առկա կարողությունների բարելավման հնարավորությունները: Արդյունքում կազմվել է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ՀՀ-ին ցուցաբերվելիք տեխնիկական օժանդակության համալիր ծրագիր՝ իր կարճաժամկետ ու երկարաժամկետ առաջնահերթություններով:

Հաջորդող այցերի ընթացքում ներկայացվել է խաղատնային և ռիելթորական գործունեության բնագավառներում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջազգային լավագույն փորձը, քննարկվել են վերահսկողության արդյունավետ իրականացման հարցեր, մշակվել են համապատասխան վերահսկողական ձեռնարկ-մեթոդաբանություններ: Անցկացվել են սեմինար-քննարկումներ ՀՀ ֆինանսների նախարարության, Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, խաղատների/շահումով խաղ կազմակերպող անձանց և ռիելթորների համար: Բացի այդ, ԱՄՀ փորձագետները ՖԴԿ-ի աջակցությամբ ՖՎՎ-ի հետ համատեղ

մշակել են տեղերում և հեռակա վերահսկողության իրականացման կանոնակարգը, ինչպես նաև ֆինանսական կազմակերպությունների համար համապատասխան ուղեցույցներ և այլն:

ԱՄՆ Գանձապետարանի կողմից տրամադրվող տեխնիկական օժանդակության շրջանակներում կատարվել են մի շարք աշխատանքներ, ինչպիսիք են ՖԴԿ գործերի կառավարման էլեկտրոնային համակարգի մշակումն ու ներդրումը, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում տարբեր իրավասու մարմինների ու հաստատությունների համար կազմակերպվող ուսումնական սեմինարները, ՖԱԹՖ-ի 40+9 հանձնարարականների կիրառման մեթոդաբանության հայերեն թարգմանությունը և այլն:

Բացի այդ նույն տեխնիկական օժանդակության շրջանակներում Բուլղարիայի ֆինանսական հետախուզության մարմնի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն Բուլղարիայի ՖՀՄ-ի գործունեության փորձի, այդ երկրում առկա ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի ուսումնասիրության նպատակով հուլիսին տեղի է ունեցել ՖԴԿ-ի, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության և Փաստաբանների պալատի ներկայացուցիչների այցը Բուլղարիա: